ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-ԷՍ-2018/183

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 29.11.2018թ. թիվ 27/26-3/21864-18 գրությամբ «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00442959) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 22.11.2018թ. թիվ ԴՎԱ/4612 գրության հիման վրա, 29.11.2018թ. նախաձեռնել է «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 22.11.2018թ. թիվ ԴՎԱ/4612 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ի միջև 20.09.2018թ. կնքված ՆՀԲՄԱՊՁԲ-7/9-3 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. նոյեմբերի 19-ին միակողմանի մասնակի լուծել է վերոնշյալ պայմանագիրը:

Վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունները 19.11.2018թ. հրապարակվել են www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Սարգիս Պետրոսյանը:

3. «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ն 03.11.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Գործի հակիրճ նկարագրությունը.

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) կողմից վերջին իս կարիքների համար հայտարարվել է կարտոֆիլի ձեռքբերման նպատակով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/9» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որի հրավերի տեքստը հաստատվել է գնանշման հարցման հանձնաժողովի 2018 թվականի հուլիսի 6-ի թիվ 1 որոշմամբ:

Վերոհիշյալ հրատապ բաց մրցույթի՝ Կոտայքի տարածաշրջանի զորամասի մատակարարման մասով ՀՀ պաշտպանության նախարարության և «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) միջև 20.09.2018թ. կնքվել է «ՀԲՄԱՊՁԲ-7/9-3» ծածկագրով պայմանագիր:

Վերոհիշյալ հրավերի հավելված 1-ով /տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով/ սահմանվել է.

«Կարտոֆիլ ուշահաս. (ԳՕՍՏ 7176-85)

Արտաքին տեսքը՝ պալարներն ամբողջական, չոր, չծլած, չկեղտոտված, առանց հիվանդությունների, հասած, ստվար կլեպով, ըստ ձևի և գույնի կարող են լինել և տարբեր, միաձև. կլոր ձվաձև /4սմ/՝ 5%, երկարացված /3,5 սմ/՝ 5%, կլոր ձվաձև /4-5սմ/՝ 20%, երկարացված /4-4,5սմ/՝ 20%, կլոր ձվաձև /5-6սմ/՝ 55%, երկարացված՝ /5-5,5սմ/՝ 55%, կլոր ձվաձև՝ /6-7սմ/՝ 20%, երկարացված՝ /6-6,5սմ/՝ 20%: Խիլերով պալարների և կանաչած պալարների /մակերեսի 1/4-ից ոչ ավելի/ քանակությունն ընդհանուր զանգվածում՝ ոչ ավելի, քան 2%: Պալարի մակերեսի 1/4-ից ավելի կանաչեցման դեպքում մթերումը չի թույլատրվում: Մեխանիկական վնասվածքներով պալարների /կտրտված, հարված/ քանակությունն ընդհանուր զանգվածում՝ ոչ ավելի, քան 5%: Տրորված պալարների մթերումը չի թույլատրվում: Ցրտահարված պալարների մթերումը չի թույլատրվում: Պալարներին կպած հողի քանակությունն ընդհանուր զանգվածում 1%-ից ոչ ավելի: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի»:

Գնման ժամանակացույցի համաձայն՝ մատակարարումները պետք է իրականացվեին հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին՝ ըստ համապատասխան զորամասերի:

Սակայն կապված բերքի համատարած հիվանդությունների և ցրտահարությունների հետ՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/9» ծածկագրով հրատապ բաց մրցույթին մասնակցության հայտեր ներկայացրած և այնուհետև պայմանագրեր կնքած մատակարարների կողմից առաջացել էին մատակարարման հետ կապված խնդիրներ:

Կնքված պայմանագրերը չլուծելու և մատակարարումների իրականացումը ապահովելու նպատակով ս.թ. հոկտեմբերի 20-ին բոլոր մատակարարները հրավիրվել են քննարկման ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մակար Ղամբարյանի աշխատասենյակ՝ կարտոֆիլի մատակարարման հետ կապված խնդիրները ուսումնասիրելու համար: Քննարկման ընթացքում հայտնել ենք, որ հիմնական խնդիրը, որը պատճառ է հանդիսանում կարտոֆիլի մատակարարումը ուշացնելու համար, տեխնիկական բնութագրով սահմանված կարտոֆիլի չափերն են, հետևաբար խնդրել ենք ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին տեխնիկական բնութագրում կատարել կարտոֆիլի չափի հետ կապված փոփոխություն:

Ս.թ. հոկտեմբերի 30-ին նորից հանդիպում ենք ունեցել ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մակար Ղամբարյանի հետ՝ ով հայտնեց, որ տեխնիկական բնութագիրը կվերանայվի և մինչև ս.թ. նոյեմբերի 10-ը մատակարարներին կտրամադրեն փոփոխված տեխնիկական բնութագիրը՝ հնարավորություն ընձեռելով հոկտեմբեր ամսվա մատակարարումները իրականացնել մինչև ս.թ. նոյեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում:

ՀՀ պաշտպանության նախարարությունը մինչև ս.թ. նոյեմբերի 10-ն այդպես էլ տեխնիկական բնութագրում չի կատարել որևէ փոփոխություն, որպեսզի «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ն հնարավորություն ունենար կատարել մատակարարումը և արդյունքում ՀՀ պաշտպանության նախարարությունը նոյեմբերի 19-ին միակողմանի լուծել է ՀՀ պաշտպանության նախարարության և «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ի միջև 20.09.2018թ. կնքված «ՀԲՄԱՊՁԲ-7/9-3» ծածկագրով պայմանագիրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրություն ենք հրավիրում այն հանգամանքի, որ նոյեմբերի 11-ին ՀՀ պաշտպանության նախարարությունը մյուս մատակարարներին տրամադրել է փոփոխված տեխնիկական բնութագիրը, սակայն անհասկանալի պատճառներով՝ լուծել պայմանագիրը միայն «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ի հետ:

Իրավական հիմքերը և հիմնավորումները.

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Տվյալ դեպքում «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ի կողմից անկախ հանգամանքներում առաջացել է կարտոֆիլի բերքատվության խնդիր, ինչից ելնելով «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ն և կարտոֆիլի մատակարար այլ ընկերությունները ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալի մոտ կայացած քննարկման ժամանակ հայտնել են առաջացած խնդրի մասին՝ խնդրելով տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություն, այն է՝ կարտոֆիլի չափը փոքրացնել:

Արդյունքում 30.10.2018թ.-ին ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մակար Ղամբարյանը հայտնել է, որ տեխնիկական բնութագիրը կվերանայվի և մինչև ս.թ. նոյեմբերի 10-ը մատակարարներին կտրամադրեն փոփոխված տեխնիկական բնութագիրը, այդպիսով հնարավորություն ընձեռելով հոկտեմբեր ամսվա մատակարարումներն իրականացնելու մինչև ս.թ. նոյեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում:

Սակայն ՀՀ պաշտպանության նախարարությունը մինչև ս.թ. նոյեմբերի 10-ը չկատարելով տեխնիկական բնութագրում կարտոֆիլի չափի հետ կապված փոփոխությունը՝ «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ին և մյուս մատակարարներին գցել է այնպիսի մի իրավիճակի մեջ, որ այլևս հնարավոր չէ իրականացնել մատակարարումը և արդյունքում ՀՀ պաշտպանության նախարարությունը նոյեմբերի 19-ին միակողմանի լուծել է ՀՀ պաշտպանության նախարարության և «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ի միջև 20.09.2018թ. կնքված «ՀԲՄԱՊՁԲ-7/9-3» ծածկագրով պայմանագիրը:

Այս պարագայում ստեղծվել է մի իրավիճակ, որ «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ն պետք է սպասեր ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կարտոֆիլի չափերի հետ կապված կատարվելիք փոփոխությանը և նոր միայն իրականացներ մատակարարումը:

Եվ եթե ՀՀ պաշտպանության նախարարությունը նոյեմբերի 19-ը միակողմանի չլուծեր «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը և ինչպես մյուս մասնակիցներին՝ այնպես էլ «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ին նոյեմբերի 11-ին տրամադրեր փոփոխված տեխնիկական բնութագիրը, ապա հնարավորություն կունենանինք պատշաճ իրականացնել մատակարարումը:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, խնդրում ենք «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/183 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 29.11.2018թ. թիվ 27/26-3/21864-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարությանը 22.11.2018թ. թիվ ԴՎԱ/4612 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության և «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ի միջև 20.09.2018թ. կնքված N ՀԲՄԱՊՁԲ-7/9-3 գնման պայմանագիրը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կարտոֆիլի ձեռքբերման նպատակով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/9» ծածկագրով հրատապ բաց մրցույթի արդյունքում ՀՀ պաշտպանության նախարարության և «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ի միջև 20.09.2018թ. կնքվել է N՝ՀԲՄԱՊՁԲ-7/9-3 գնման պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

• 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

• 2.1.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի՝ ապրանքագրով սահմանված ժամկետից:

• 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

• 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի՝ ապրանքագրով սահմանված ժամկետից:

• 2.4.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

• 2.4.2 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

• 3.1 կետի համաձայն՝ պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 4,512,200 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

• 5.1 կետի համաձայն՝ Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3):

• 8.9 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, նույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայամանգրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է ապահովել հետևյալ մատակարարումը.

Կարտոֆիլ, Կոտայքի տարածաշրջանային զորամասեր, 53,543 կգ, 4,512,000 ՀՀ դրամի, հոկտեմբեր ամսին:

Հրավերի Հավելված 1-ով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է գնվելիք կարտոֆիլի հետևյալ բնութագիրը.

«Կարտոֆիլ ուշահաս. (ԳOUS 7176-85)

Արտաքին տեսքը՝ պալարներն ամբողջական, չոր, չծլած, չկեղտոտված, առանց հիվանդությունների, հասած, ստվար կլեպով, ըստ ձևի և գույնի կարող են լինել և տարբեր, միաձև. կլոր ձվաձև /4սմ/՝ 5%, երկարացված /3,5 սմ/՝ 5%, կլոր ձվաձև /4-5սմ/՝ 20%, երկարացված /4-4,5սմ/՝ 20%, կլոր ձվաձև /5-6սմ/՝ 55%, երկարացված՝ /5-5,5սմ/՝ 55%, կլոր ձվաձև՝ /6-7սմ/՝ 20%, երկարացված՝ /6-6,5սմ/՝ 20%: Խիլերով պալարների և կանաչած պալարների /մակերեսի 1/4-ից ոչ ավելի/ քանակությունն ընդհանուր զանգվածում՝ ոչ ավելի, քան 2%: Պալարի մակերեսի 1/4-ից ավելի կանաչեցման դեպքում մթերումը չի թույլատրվում: Մեխանիկական վնասվածքներով պալարների /կտրտված, հարված/ քանակությունն ընդհանուր զանգվածում՝ ոչ ավելի, քան 5%: Տրորված պալարների

մթերումը չի թույլատրվում: Ցրտահարված պալարների մթերումը չի թույլատրվում: Պալարներին կպած հողի քանակությունն ընդհանուր զանգվածում 1%-ից ոչ ավելի: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի»:

19.11.2018թ. թիվ ԴՎԱ/4546 գրությամբ Պատվիրատուի կողմից Ընկերությանն ուղարկվել է ծանուցում, որում նշվել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ի միջև 20.09.2018թ. կնքված է ՈՀԲՄԱՊՁԲ-7/9-3 գնման պայմանագրի շրջանակներում Ընկերությունը 2018թ. հոկտեմբեր ամսին Կոտայքի տարածաշրջանային զորամասեր պետք է մատակարարեր 53,543 կգ կարտոֆիլ, սակայն նոյեմբեր 11-ի դրությամբ մատակարարվել է 16,070 կգ կարտոֆիլ:

Պատվիարտուն հայտնել է նաև, որ հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. նոյեմբերի 19-ին միակողմանի լուծել է ՀԲՄԱՊՁԲ-7/9-3 պայմանագիրը, հոկտեմբեր ամսվա ընթացքում մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված 37,473 կգ կարտոֆիլի խմբաքանակի մասով:

Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը 19.11.2018թ. Պատվիրատուն հրապարակել է նաև www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Բողոքներ քննող անձի մոտ կայացած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ պայմանագիր կնքած մատակարար ընկերությունների մոտ կարտոֆիլի մատակարարման ժամկետների խախտման հիմնական պատճառը կարտոֆիլի տեխնիկական բնութագրով սահմանված կարտոֆիլի չափսերն են: Վերջինիս խոսքով, ս.թ. հոկտեմբերի 20-ին մատակարարները ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալի կողմից հրավիրվել են քննարկման, և խնդրել են ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին տեխնիկական բնութագրում կատարել կարտոֆիլի չափի հետ կապված համապատասխան փոփոխություններ: Բանակցությունների արդյունքում, 30.10.2018թ. ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալը հայտնել է, որ տեխնիկական բնութագիրը կվերանայվի և մինչև ս.թ. նոյեմբերի 10-ը մատակարարներին կտրամադրվեն

փոփոխված տեխնիկական բնութագիրը: Սակայն, Ընկերության ակնկալիքներին հակառակ, ՀՀ պաշտպանության նախարարությունը մինչև ս.թ. նոյեմբերի 10-ն այդպես էլ տեխնիկական բնութագրում որևէ փոփոխություն չի կատարել, և նոյեմբերի 19-ին միակողմանի լուծել է ՀՀ պաշտպանության նախարարության և «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ի միջև 20.09.2018թ. կնքված «ՀԲՄԱՊՁԲ-7/9-3» ծածկագրով պայմանագիրը: Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հավաստիացրեց, թե իբր ՀՀ պաշտպանության նախարարությունը մյուս բոլոր մատակարարներին տրամադրել է փոփոխված տեխնիկական բնութագիրը, սակայն անհասկանալի պատճառներով՝ պայմանագիրը լուծել է միայն «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ի հետ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է

կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 52-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում պայմանագիր ստորագրած մասնակցի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Նույն ենթակետով նախատեսված գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

Կարգի 56-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ արգելվում է պայմանագրում,(...) կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Արհեստական է համարվում պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների փոխարինումն այլ բնութագրեր ունեցող ապրանքներով, աշխատանքներով կամ ծառայություններով, որոնք միասին գումարային արտահայտությամբ գերազանցում են պայմանագրի գնի տասնհինգ տոկոսը: Պայմանագրի գնի տասնհինգ տոկոսի շրջանակում փոխարինումը կարող է կատարվել, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման մասնագիտական եզրակացությունն այն մասին, որ փոխարինումը հանգեցնում է պայմանագրի արդյունավետ իրականացմանը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պաշտպանության նախարարության և «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ի միջև 20.09.2018թ. կնքված է ՈՀԲՄԱՊՁԲ-7/9-3 գնման պայմանագրի շրջանակներում Ընկերությունը պարտավորվել էր 2018թ. հոկտեմբեր ամսին Կոտայքի տարածաշրջանային զորամասեր

մատակարարել 53,543 կգ կարտոֆիլ, սակայն նոյեմբեր 11-ի դրությամբ մատակարարել է 16,070 կգ կարտոֆիլ:

- Պատվիրատուի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծվել է, ինչի մասին ծանուցումը 19.11.2018թ. Պատվիրատուն հրապարակվել է նաև www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Դեագա» ՍՊԸ-ն 20.09.2018թ. կնքված ՈՀԲՄԱՊՁԲ-7/9-1 պայմանագրով նախատեսված ապրանքը Պայմանագրով նախատեսված ծավալով և ժամկետներում չմատակարարելով՝ խախտել է նույն պայմանագրով ստանձնած պարտավորությունը, ինչը հանգեցրել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից Պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Ընկերության կողմից չներկայացվեց որևէ վերաբերելի ապացույց այն մասին, որ պայմանագրեր կնքած անձիք ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան պաշտոնատար անձի կողմից հրավիրվել են գնվող կարտոֆիլի չափի հետ կապված փոփոխությունների շուրջ բանակցությունների, որոնց արդյունքում վերջինս խոստացել է կարտոֆիլի տեխնիկական բնութագրում կատարել համապատասխան փոփոխություններ, ինչպես նաև չներկայացվեց որևէ ապացույց առ այն, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը մյուս բոլոր մատակարարներին տրամադրել է կարտոֆիլի փոփոխված տեխնիկական բնութագիրը, որի վերաբերյալ կնքվել է համապատասխան համաձայնագիր:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 29.11.2018թ. թիվ 27/26-3/21864-18 գրությամբ «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00442959) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ